



**«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**



ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

Հայաստան, 0025, Երևան, Կորյունի փ. 2, հեռ. 060621238, 2-38, ss@ysmu.am

**«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 25-Ի ԹԻՎ 5
ՀԵՌԱԿԱ ԵՂԱՆԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՆԻՍՏՈՒՄ ԹԻՎ 4 ՆԻՍՏԻ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1407-Ն որոշմամբ հաստատված «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) կանոնադրության 55-րդ կետը, նպատակ ունենալով հնարավորին արդյունավետ կազմակերպել արտակարգ դրության ժամանակահատվածում Համալսարանի ուսումնական աշխատանքները, գիտական խորհուրդը.

ՈՐՈՇՈՒՄ Է

1.«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի 2020 թվականի մարտի 20-ի հեռակա եղանակով ընդունված թիվ 4 նիստի որոշումը նախաբանից հետո շարադրել նոր համադրությամբ.



«1.Դադարեցված համարել Համալսարանի կրթական գործունեությամբ պայմանավորված աշխատանքները, դասընթացները 2020 թվականի մարտի 16-ից՝ սույն որոշմամբ նախատեսված կարգով և ժամկետներով, բացառությամբ Համալսարանի քոլեջի և «Հերացի» ավագ դպրոցի:

2. Համալսարանի ուսանողների համար սահմանել արձակուրդային շրջան՝

1) Ընդհանուր բժշկության, ստոմատոլոգիայի, դեղագիտական, ռազմաբժշկական ֆակուլտետների ուսանողների 1-ից 3-րդ կուրսերի համար՝ 2020 թվականի մարտի 23-ից մարտի 27-ը ներառյալ ընկած ժամանակահատվածով՝ ամառային արձակուրդի համապատասխան օրերի փոխարեն.

2) Ընդհանուր բժշկության, ստոմատոլոգիայի, դեղագիտական, ռազմաբժշկական ֆակուլտետների ուսանողների 4-ից մինչև ավարտական կուրսերի և հանրային առողջության ֆակուլտետի մագիստրատուրայի ուսանողների համար՝ 2020 թվականի մարտի 23-ից ապրիլի 3-ը ներառյալ ընկած ժամանակահատվածով՝ ամառային արձակուրդի համապատասխան օրերի փոխարեն:

3. Համալսարանի քոլեջում և «Հերացի» ավագ դպրոցում դասընթացներն իրականացնել հեռավար առցանց ռեժիմով:

4. Հանձնարարել Համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Լ.Ռ.Ավետիսյանին կազմակերպել հեռավար կրթություն՝

1) Ընդհանուր բժշկության, ստոմատոլոգիայի, դեղագիտական, ռազմաբժշկական ֆակուլտետների ուսանողների 1-ից 3-րդ կուրսերի համար՝ 2020 թվականի մարտի 30-ից, համաձայն գործող դասացուցակի,

2) Ընդհանուր բժշկության, ստոմատոլոգիայի, դեղագիտական, ռազմաբժշկական ֆակուլտետների ուսանողների 4-ից մինչև ավարտական կուրսերի և հանրային առողջության ֆակուլտետի մագիստրատուրայի ուսանողների համար՝ 2020 թվականի ապրիլի 6-ից՝ համաձայն գործող դասացուցակի:

5. Համալսարանի կլինիկական օրդինատուրայում և հետբուհական կրթության ունկնդիրների դասընթացները դադարեցնել, մինչև վերսկսման մասին որոշում ընդունելը:



6. Համալսարանի ներքոթվարկյալ ամբիոնների դասախոսների համար առաջարկել սահմանել արձակուրդային շրջան՝

1) Ընդհանուր բժշկության, ստոմատոլոգիայի, դեղագիտական, հանրային առողջության, ռազմաբժշկական ֆակուլտետների 1-ից 3-րդ կուրսերում դասավանդող դասախոսների համար՝ 2020 թվականի մարտի 23-ից մարտի 27-ը ներառյալ ընկած ժամանակահատվածով՝ ամառային արձակուրդի համապատասխան օրերի փոխարեն, բացառությամբ Ինֆեկցիոն հիվանդությունների ամբիոնի աշխատողների:


2) Ընդհանուր բժշկության, ստոմատոլոգիայի, դեղագիտական, հանրային առողջության, ռազմաբժշկական ֆակուլտետների 4-ից մինչև ավարտական կուրսերում դասավանդող դասախոսների համար՝ 2020 թվականի մարտի 23-ից ապրիլի 3-ը ներառյալ ընկած ժամանակահատվածով՝ ամառային արձակուրդի համապատասխան օրերի փոխարեն, բացառությամբ Ինֆեկցիոն հիվանդությունների ամբիոնի աշխատողների:

6. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը հանձնարարել Համալսարանի ռեկտոր Արմեն Մուրադյանին:

Համալսարանի Գիտական խորհուրդը կոչ է անում սովորողներին և աշխատողներին աջակցել Համալսարանի պատասխանատուներին՝ չնախատեսված, արտակարգ դրության պայմաններում միասնական ուժերով հաղթահարելու ստեղծված իրավիճակը:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ



Ա.Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Տ.Գ.ԱՎԱԳՅԱՆ